

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ *)

V

Ազգարնակութիւնները.—Հայերը, թիւը, վիճակազրական տեղեկութիւններ. հայերի թուի նուազելու պատճառները. գաղթականութիւն. գաւառացիները զբաղումն և տնտեսական վիճակը. կենցաղավարութեան պայմանները. բողոքական միսիոնարութիւնը գիւղերում. կրօնական վիճակը. եկեղեցիները և վանքերի դրութիւնը:

Բազմութեան կողմից առաջին տեղը բռնում են հայերը, ուրեմն սկսենք նախ հայերի մասին:

Ձեռնդրելով Վան քաղաքի հայեր, գաւառացի հայերի թիւը հասնում է մօտաւորապէս 120,000-ի, որոնք ապրում են նահանգի զանազան մասերում հետեւեալ թուերի համեմատ.

		80-ական քուերին բնակիչ	
		ներկայումս—տուն՝	կար՝
Թիմար գիւղախումբն ունի	3300.	15,000	
Հայոց Ձոր	» 1650.	7,500	
Արճակ	» 700.	5000	
Բերկըրի	» 1300.	15,000	
Կարճկան	» 800.	6,000	
Մոկս	» 2000.	10,000	
Մահմուդիէ գաւառակ	500.	—	
Շատախ	» 3000.	24,000	
Գաւաշ	» 1600.	9,000	
Ալջաւազ	» 800.	10,000	
Արճէշ	» 300.	25,000	
Բաշկալէ	» 1350.	10,000	
Գէւառ	» 50.	—	
Ջուլամերկ	» 350.	10,000	
Շէմդինան	» չկայ	—	

*) Ցես «Մուրճ», № 3.

Մէմբերէթ-իւլ-Համիդ գաւ.	2500.	15,000
Բէյթ-իւլ-Շիւբար	»	չկայ
Ընդամենը 20,200 տուն		ընդ. 161,500 բնակիչ.

Մեր այս թուերը պաշտօնական աղբիւրից չեն քաղուած, այլ բուն իսկ իւրաքանչիւր գաւառակում կամ գիւղախմբերում տարիներով ճանապարհորդող, նստակեաց վիճակ ունեցող, շրջիկ առևտրականների պաշտօն ունեցող վստահելի անձերից, ինչպէս նաև մի քանի տեղերի մապին յատուկ ուսումնասիրողներից. այս թուերի մէջ եթէ սխալ էլ լինի, շատ չնչին պէտք է համարել. որևէ գիւղի հայ տների թուի մէջ 2 տուն աւելի կամ պակաս պիտի լինի: Սակայն չմոռանանք խոստովանել որ մի քանի գաւառների, օր. Զուլամերկի, Մէմբերէթ-իւլ-Համիդի և Գէլաուի գիւղերի ճիշտ թուեր չկարողացանք որոշել, գուցէ կան այստեղեր մէկ-երկու գիւղեր, որ մեր ցուցակից դուրս են մնացել, սակայն այս կարգի գիւղերը չափազանց փոքր լինելու են (5—10 տուն), այլապէս մոռացութեան մատնուելուց ազատ պիտի մնային: Այսպէս թէ այնպէս յենուելով այս ցուցակի թուերի վրայ գտնուում ենք որ գաւառացի հայ տների թիւը հասնում է 20,200-ի: Հայ գիւղական ընտանիքները բաւական բազմաճիւղաւ են, ունեն 5—10 անդամ և նոյնիսկ աւելի, սակայն միջին թուով եթէ իւրաքանչիւր տան վրայ 6 հոգի հաշուենք, կ'ունենանք 121,200 հայ բնակիչ:

Համեմատելով այս թիւը 80-ական թուականի մարդահամարի ցոյց տուած թուի հետ, տեսնում ենք որ 20 տարուայ մէջ գաւառացի հայերի թիւը աւելնալու փոխարէն պակսել է տարբերութիւնը հասնում է 40,300:

Պատճառը շատ ակնեւ է: Հայ տարրը որքան որ խիստ սերտ կապով կապուած է իր բնակավայրի, մայրենի հողի հետ, բայց կարծես միւս կողմից շարունակ զօրաւոր հանգամանքներ չեն դադարում նրան դրդելու դէպ օտար հողը: 90-ական թուականին սոսկալի մի հոսանք տակնուվրայ արաւ ամբողջ Վան նահանգի հայաբնակ գիւղերը, Արճէշ, Ալշաւաղ, Աղբակ, Նորդուզ, Շատախ, Բերկրի կարճ ժամանակի մէջ ամայացան, նուազ չափով նոյն վիճակին ենթարկուեցան նաև միւս գաւառները և նոյնիսկ Վան քաղաքը, թէև այդ հոսանքն աւելի սոսկալի կերպարանք ստացաւ 95—96 թուերին, բայց հետզհետէ մեղմացաւ և այժմ շատ չնչին չափով շարունակուած է:

95—97 թուերի արհաւիրքները և սովը ստիպեցին հայ գիւղացուն գաղթել դէպի Պարսկաստան, Ռուսաստան և ուրիշ զանազան տեղեր. նրանց մեծագոյն մասը մնացել է մինչև այ-

Ժամ յիշեալ տեղերում, շատ չնչին մասը միայն դարձաւ իր վաթաշուր. գաւառացի հայ գաղթականները ոչ թէ միայն յիշեալ տեղերը գաղթեցին կամ գաղթում են, այլ նոյնիսկ մինչև այժմ էլ խումբ-խումբ դիմում են դէպի Վան քաղաք: Շատերն այդ գաղթականներէն արդէն հաստատարնակ են եղել քաղաքում, ունին սեփական տուն, այգի, դրամագլուխ և գործ, իսկ մի մասը դեռևս թափառական է տնից-տուն, դռնից-դուռ, գործ է փնտրում, ողորմութիւն է խնդրում. անշուշտ մէկ օր էլ նրանք քաղաքացի դառնալու իրաւունք ձեռք կը բերեն, թէև տեղական իշխանութիւնը աշխատում է քաղաքում թափառող այդ գաղթականներին վերադարձնել իրանց ծննդավայրերը, սակայն չի յաջողում, որովհետև գաղթականները գերադաս են համարում քաղաքումը մի առժամանակ ամեն տեսակ նեղութիւններ քաշել, քան թէ նորից գլուղը դառնալ և պարբերական թշուառութեան ենթարկուել: Բայց գաղթականական հոսանքը գիւղերից դէպի քաղաք օրէցօր դադրում է և նուազում է:

Կայ գաղթականների մի ուրիշ խումբ, որ իր տեղից հեռանալով բնակութիւնը հաստատում է ոչ թէ օտար երկրներում կամ Վան քաղաքում, այլ նոյնիսկ դրացի կամ հեռաւոր նահանգապատկան գիւղերում: Այսպէս Հայոց Զոր, Թիմար, մասամբ նաև Գաւաշ, Կարճկան, Մոկս գաւառակներում և գիւղախումբերում կան բաւական թուով նորդուզցի, աղբակցի, ալջաւազցի, արճէշցի գաղթականներ: Թէ արտասահման և թէ Վան քաղաքը գաղթող հայերի թիւը կարելի է հաշուել մօտ 50,000...

Ահա այժմ կարծեմ դժուար չէ հասկանալ թէ ինչու Վանի գաւառացի հայերի թիւը փոխանակ աւելնալու, աւելի նուազել է:

Գաւառացի հայերի զբաղումը դարերից ի վեր եղել է անասնապահութիւն և երկրագործութիւն. Վանն արդէն ամենից աւելի այդ երկու զբաղումների դէւրութիւն է տալիս իր հողով ու կլիմայով: Արդարև Վանի հայ գաւառացիները մինչև այժմ էլ պինդ գրկել են հողը, գութան ու արօրը, իսկ անասնապահութիւնից 80-ական թուականներին, մանաւանդ աւելի ուժգին կերպով 90-ական թուականի կէսերից յետոյ ձեռնթափ եղան, տեսնելով որ քուրդերն երկրագործութեան հետ սէր չունին, այլ իրանց փափաքն է ամբողջ անասնապահութիւնն իրանց ձեռքում պահել, այդ զբաղումը քրդերին թողին և իրանք ապաւինեցան միայն երկրագործութեան: 90-ական թուերից առաջ կային հայ գիւղացիներ, որոնք 2—3000-ից աւելի ոչխար էին պահում, իսկ այժմ 10 հատ անգամ չեն կարող պա-

հել: Քաղաքի շուրջը գտնուած մի քանի գիւղերում, Հայոց-Ձորի, Թիմարի շրջանակներում հարիւրի փոխարէն հինգ ոչխար պահողներ կան: Այժմ, կարելի է ասել, թէ Վանի գաւառացի հայերը զբաղուած են միայն երկրագործութեամբ. արդարեւ այդ զբաղման նուիրուած է հայ գիւղացին, ունի իր տրամադրութեան տակ բաւական ընդարձակ տարածութեամբ վարելահողեր, որոնք, ինչպէս տեսանք, միջակից աւելի բարեբեր են և իրանց արդիւնքով կարող են առատապէս վարձատրել երկրագործներին. թէև 95—96 թուերին երկրագործներն զրկուեցին իրանց լծկան եզներից, գոմէշներից և 97—98-ի սովը ընդհանուր լքում և յուսահատութիւն առաջ բերեց, սակայն այժմ կարծես բոլորովին բուժուել է այդ վէրքը, գրեթէ 80 % ունի իր սեփական եզն ու գոմէշն, այնինչ յիշեալ շրջանի մէջ բոլորովին զրկուած էին:

Վերը յիշուած միւս երկրորդական զբաղումների մէջն էլ գաւառացի հայերը բաժին ունին, սակայն այդ մասին կանգ առնել չարժէ:

Տնտեսապէս գաւառացի հայերը լաւ վիճակ չունին, թէև եթէ համեմատելու լինինք նրանց ներկայ վիճակը մօտիկ անցեալի 1896—900 շրջանի հետ, կը տեսնենք որ անհամեմատ երջանիկ են այժմ: Որովհետև յիշեալ շրջանի մէջ, մէկ կողմից յայտնի արհաւիրքներ, կողոպուտ, թալան, սրածութիւն, միւս կողմից՝ աննկարագրելի սով արիւնաքամ արին նրան, հայ գիւղացին մերկ-չլուտ և անօթի ընկաւ իր տան մէջ—ճարպիկ գտնուողները գաղթեցին—բարեբախտաբար շատ երկար չտևեց այդ սոսկալի շրջանը, ապահովութիւնը հետգհետէ երևան ելաւ, անօրինակ սովին յաջորդեց նոյնքան անօրինակ տաքանթութիւն, և հայ գիւղացին ուշքի եկաւ: Եւ պէտք է համոզուել որ գիւղացի տարրի հարստանալը կամ աղքատանալը շատ արագ կերպով է կատարուում իր երկու ծայրայեղութիւնների մէջ: Եթէ մէկ տարի հունձքը լաւ չեղաւ, գիւղացին սաստիկ թշուառութեան կը մատնուի, մինչև վիզը կը թաղուի անօրինակ տոկոսաբեր պարտքի մէջ. իսկ եթէ յաջորդ տարին բերքը առատ եղաւ, նա արդէն իր պարտքերից ազատուած է: Եթէ գիւղացին պարտք չունեցաւ, արդէն երջանիկ է, որովհետև նրա բնակարանի անշուքութիւնը, կահ-կարասիների վերին աստիճանի պարզութիւնը և նրա կերուխումի մէջ տիրող խիստ խնայողութիւնը միշտ են տալիս նրան ապրել խիստ չնչին ծախսով: Նրա գլխաւոր հոգսը իր տան հացը, կառավարութեան տուրքն և պարտատէրների պահանջներն են:

Մտէք վանեցի հայ շինականի խրճիթը, բաղկացած է դա

ընդհանրապէս 2—3 կամ առ անուշին 4 կտոր գետնափոր կամ միայնակ հողաշէն կամ քարաշար, մուկ, անօդ, խոնաւ բաժանմունքներից, որոնցից մէկն և ամենամեծն ծառայում է գիւղացուն իբրեւ ակոս, ուր հաւաքուած են գիւղացու ընտանիքի ամենաանհաշիւի և պիտանի անդամները — եղներն ու գոմէշները, միւսը ծառայում է իբրեւ մարագ—յարդանոց, ուր դիզուած է գիւղացու անասունների տարեկան պաշարը — խոտ ու յարդը, մէկ կտորն էլ որ կոչւում է թոնիրտուն կամ տանտուն, ծառայում է իբրեւ թէ խոհանոց, թէ հիւրանոց, թէ ննջարան և թէ վառելիքի տարեկան պաշարի, կահկարասիների ամբար և մթերանոց: Տան բոլոր անդամներն այդտեղ են քնում, բացառութիւն են կազմում ամբողջ 50—60 տնից բաղկացած գիւղի մէկ կամ երկու տներ, որոնք մէկ կտոր էլ անելի ունին, որ ծառայում է իբրեւ մսաֆըրի օդա—հիւրանոց, ոմանք էլ վառելիքի համար առանձին ամբար ունին, որ կոչւում է ամբրոց:

Գիւղական տան կահկարասիներն են երկրագործական գործիքներ—արօր, գուլթան, լուծ, գերանդի, մանգաղ, բահ կամ ջարջառ, մանգեռ, բառէշտան, քնաշորեր—թաղիք, կապերտ, վերմակ (շատերի համար իբրեւ վերմակ և դոշակ ծառայում են թաղիքի և կապերտի կտորներ), կերակուրի պարագաներ—հողից պատրաստուած պուտովներ և ափսէներ: Ահա այս է գիւղացու տան կազմութիւնը և կահկարասիները:

Շինականի կերածն է թարմ հաց, թան կամ թանապուր, ժափիկ, շաբաթ կամ երկու շաբաթ մի անգամ իւղեղէն կերակուր—ճաշ կամ փլաւ: Պահք օրերը, նոյնիսկ շատ անգամ ուտիս օրեր նրան իբրեւ սնունդ ծառայում է զուտ չոր հացը, տարին մէկ անգամ մսի համ չի առնում—նայած թէ երբ ունէ անասուն—եզ, գոմէշ կամ ոչխար մահամբձ վիճակի կը մօտենայ իր հիւանդութեան մէջ, որպէսզի համոզուին թէ այլևս չի առողջանալ, կը մորթեն և կ'ուտեն:

Հայ գիւղականի հագուստն է տեղական տարազով պատրաստուած կտաւէ շապիկ և վարտիք, բուրդից գործուած շալվար, քաղախի, քոլոզ, և ոտքի կօշիկն է չարուխ—տրեխ: Գիւղացի մանուկները մինչև 10—15 տարու հասնելը գրեթէ մէկ շապիկով և վարտիքով են ծածկուած միայն իրանց մերկութիւնը. ձմեռները մէկ կտոր էլ հագիւ թէ անելացնեն:

Ահա այս պայմաններում ապրող հայ շինականը վարում է չափազանց պարզ, սակաւակեաց, տոկուն և չարքաշ կեանք. պատկերը կատարեալ կը լինի եթէ սրա վրայ անելացնենք նրա չարաչար աշխատութիւնը և յաճախ իր իրաւունքից, իր դառն քրտինքից զրկուելը, որովհետեւ գիւղացին չի կարող վա-

յելիլ իր դառն քրտինքի արդիւնքը. նրան կեղեքում են անսիրտ և անհոգի վաշխառուներ (որոնց մէջ առաջին տեղը բռնում են քաղաքացի հայերը), շատ անգամ խլում են նրա ամբողջ տարուայ աշխատանքը, կողոպտում, թալանում են նրա ունեցած չունեցածն. ահա այս է գիւղացու համար սոսկալին: Սակայն նա սովորել է դիմանալ այդ դառնութիւններին, նա իր Տիրոջ գթութեան և ողորմութեանն է դիմում և պինդ գըրկում է իր արտն ու անդաստան, ամեն օր ծեծում է իր կուրծքը, իր մեղքերին թողութիւն է խնդրում և փառք ու գոհութիւն է տալիս Արարչին և աշխարհին խաղաղութիւն է խնդրում:

Հայ գիւղացիների մեծագոյն մասը—մօտ 65% ներկայ պայմաններում պարտքով է ապրում: Նրա պարտքի եղանակն էլ այսպէս է. ձմեռը անցկացնելուց յետոյ, երբ գարուն բացւում է, և ծախքի դռներ բացւում են, միւս կողմից էլ պետական հարկեր վճարելու ժամանակն է, բայց կանխիկ փող չունի, ճարահատած պէտք է դիմի իր սովորական միջոցին, այսինքն վաշխառուին (թէև երկրագործական բանքա կայ Վանում, բայց դեռ շատ քչերն են որ կարող են այդ հիմնարկութիւնից օգտուել). սալաֆ է անում, այսինքն փողատէրից առնում է որոշ քանակութեամբ փող, ենթադրենք 15 ռուբլի, և պայման է դնում որ կալոցին (սեպտեմբերին) նրա տուած փողի փոխարէն վճարէ նրան ցորեն, բայց մըքան—կէս կամ նոյնիսկ քառորդ գնով. օրինակ եթէ ցորենի փութը կ'արժէ մէկ ռուբլի, նա 15 ռուբլու փոխարէն պիտի վճարէ 30—60 փ. ցորեն. ահա այս դրութիւնն է որ գլխաւորաբար շարունակ պարտքի տակ ճնշում է գիւղացուն: Այս պայմաններում հայ գիւղացին իր աշխատութեան ամենաշնչին մասին հազիւ թէ տէր դառնայ. մեծագոյն մասը անխիղճ վաշխառուների կոկորդն է անցնում: Գիտէ՞ք ինչ ասել է Վանում վաշխառութիւն, ճանաչում էք Վանի գիւղերում չրջող կամ գլխաւոր կենտրոններում հաստատուած վանեցի, սղերդցի, և մանաւանդ բիթլիղցի հայ վաշխառուներ: Գուրդն իր վայրենութեան, կատաղութեան և արիւնախում վիճակի մէջ շատ բարձր է կանգնած այս դասակարգից, որ հրէշային ամենաանխիղճ և անգութ բնազդներով տոգորուած է: Բայց գիւղացին համբերող է, նա սովոր է նրանց անյազ ձգտումներին գոհացում տալ, թող իրան վստահուի ժամանակին փողով օգնել, թող օգնեն իրան վաշխառուներ նեղ ժամանակ, հոգ չէ թէ 100-ին 300 տոկոս վճարի: Անցածներ մի քանի գաւառներում պաշտօնապէս յայտարարուեցաւ թէ կառավարութիւնն արգե-

լուծ է գրաւ դրուած կալուածներ ծախել մի պարտքի դիմաց: Իրանց պարտքերը կալուածներով ապահովեցնող վաշխառուներ (ամեն տարրից էլ) դադրեցրին իրանց փոխատուութիւն, և ահա գիւղացիները փոխանակ ուրախանալու սկսեցին դժգոհութիւններ յայտնել և գանգատուել այդ կարգադրութեան դէմ. «էլ մենք չենք կարող ապրել, էլ մեզ պարտք տուող չկայ, իսկ առանց պարտքի անկարելի է մեզ ապրել», լսւում էր ամեն կողմից: Ահա թէ ինչու գիւղացին հաշտուել է իր վիճակի հետ և ծանրութիւն չէ զգում ծանր-ծանր տոկոսներ վճարելուց: Բարեբախտաբար այս վերջին 2—3 տարիների աժանութիւնը շունչ է տուել նրան, հունձքի առատ բերքով նա վճարում է իր սալաֆները:

6—7 տարի առաջ Վանեցի հայ շինական գրկուեց իր լծկաններից—եզ ու գոմէշից, արօր ու գութան 1—2 տարի անգործ մնացին ու ժանգոտուեցան, զանազան տեղերից օգնութեան նշաններ երևացին, իւրաքանչիւր գիւղում 1—2 զոյգ եզներ բաժանուեցան, որևէ կերպով երկրագործութիւնն նորից սկսեց կենդանանալ. իսկ այսօր կարելի է ասել որ գրեթէ ամեն մի տուն այժմ ունի իր սեփական լծկանները, 2—4 լուծ կամ աւելի և պակաս, գիւղացիների 80 % այժմ ունի իր սեփական արօրն ու գութան: Ահա թէ ինչու քիչ առաջ ասացի թէ գիւղացու հարստանալ կամ աղքատանալ կախում ունի հունձքի վիճակից, եթէ հունձք առատ չլինէր, հայ գիւղացին չպիտի կարողանար իրան գութանն յարդարել, իսկ գիւղացու համար սեփական գութան ունենալ նշանակում է անբաւհարըստութեան տէր դառնալ: Այժմ համարեա թէ Վանի բոլոր գաւառացի հայերը վճարել են իրանց տուրքերի հին ապառիկներն:

Տնտեսական այսօրինակ պայմաններում ապրող հայ գաւառացիների կրթական վիճակի մասին խօսելն անգամ աւելորդ է գրեթէ: Թէև 80-ական թուականին զանազան գիւղերում բացուեցան 88-ի չափ գիւղական վարժարաններ Պոլսի Միացեալ Ընկերութեան օգնութեամբ և տեղական ջանքերով, սակայն 90-ական թուականի վերջերում բոլորն էլ փակուեցան, այժմ կարելի է հաշուել 50-ի չափ ուսումնարաններ այս ու այն գիւղերում և գիւղաքաղաքներում, որոնք բոլորովին խալիֆայական վիճակի մէջ են գտնուում. թէև ջանքեր լինում են գիւղացիների կողմից շատ թէ քիչ պիտանի դպրոցներ պահելու համար, պէտք զգում են ուսման, սակայն նիւթական միջոցներ պակասում են: Գոյութիւն ունեցող դպրոցները որոնք շատ թէ քիչ ապահով վիճակ ունին, գտնւում են

հետևեալ տեղերում Բաշկալէ, Արճէշ, Շատախ, Մոկս, Աւանց, Կինտանանց, Ծուլստան, Անգղ, Մոխրաբերդ ևայլն: Հայոց-Ձորի, Գաւաշխի և Շատախի գիւղերում բողոքականներն սկսել են իրանց ծախքով ուսուցիչներ ուղարկել և վարժարաններ բանալ, թէև Վանի առաջնորդարան և Աղթամարայ կաթողիկոսարան, ջանքեր են ցոյց տալիս բողոքականների գործունէութիւն սահմանափակելու, բայց իզուր. Պորտ ընկերութիւնը ոսկիներ ունի, իսկ առաջնորդարան կամ կաթողիկոսարան... ոչինչ:

1896 թուից սկսած երբ վանի բողոքական միսիոնարութիւնը սկսեց նպաստ բաշխել կարօտ հայ գիւղացիներին և միևնոյն ժամանակ որբեր հաւաքել իր հովանաւորութեան տակ գտնուած որբանոցի մէջ պատրաստելու համար, կրթական գործունէութեան հիմք դրուեցաւ Հայոց Ձորի, Գաւաշի և Կարճկանի մէջ յիշեալ միսիոնարութեան կողմից: Այժմ արդէն գիւղացիներն բաւական ընտելացել են բողոքական սկզբունքների, միւս կողմից էլ իրանց վարժարանները նիւթապէս՝ գրեթէ ամբողջապէս՝ մատակարարում են բողոքականութեան կողմից, ի՞նչպէս կարող են առաջնորդի կամ կաթողիկոսական տեղապահի լոկ բարոյական յորդորներով և դատարկ քաջալերութիւններով երես շուտ տալ իրանց բարերարներին: Ընդհակառակն բողոքականութեան ընդարձակ ասպարէզ ենք տեսնում մենք. մօտիկ ապագան այդ արդէն ցոյց պիտի տայ:

Գաւառացի հայերի կրօնական վիճակը շատ աւելի տըխուր է. ճշմարիտ է որ հայ գիւղացին խիստ ջերմ կերպով է կապուած իր կրօնի, եկեղեցու, նախնական աւանդութիւնների հետ, բայց իր կրօնական հաւատալիքները, հասկացողութիւններն և համոզումները դարերի հոլովումների ազդեցութեան տակ բոլորովին աղաւաղուած, գոեհկացած և կերպարանափոխուած են: Կարող էք հանդիպել շատ գիւղերում հայ գիւղացիների, որոնց ինչ դաւանութեան պատկանելը չկարողանալով ստուգել, միևնոյն ժամանակ պիտի կասկածէք թէ արդեօք քրիստոնեայ են: Արդէն ոչ մի գիւղում հայերն իրանց դաւանութեան մասին գաղափար չունին: Եթէ որեւէ մէկին այդ մասին հարց տրուի, սովորական պատասխանն է՝ «մենք խայ քրիստոնեայ ենք, մեր ղընի (կրօնի) պէս լոս դին չկայ, մեր ժամտան պէս, մեր սրբու պէս գօրաւոր սուրբ չկայ»:

Քահանաները վերին աստիճանի տգէտ, անուս, ապիկար և բոլորովին անարժան են իրանց կոչման, շատ աւելի կոյր, քան իրանց խնամքին և առաջնորդութեան յանձնուած հօտը: Իւրաքանչիւր գիւղն ունի իրան սեփական եկեղեցի, շատ չնչին բացառութիւն են կազմում այն սակաւաբնակիչ գիւղերն

որոնք սեփական եկեղեցի չունենալով հարևան կից գիւղից են օգտուում. դրա փոխարէն կան մի քանի գիւղեր էլ որոնք մէկի փոխարէն երկու եկեղեցի ունին: Գիւղական եկեղեցիներն ընդհանրապէս քարաշէն են: Մի քանի գիւղերում վանքերն են եկեղեցու փոխուած: Հին, խարխուլ վիճակում գտնուող եկեղեցիներն տարէցտարի նորոգուում են ջերմեռանդ ժողովրդի եռանդուն աշակցութեամբ և ջանքով: Գիւղական եկեղեցիների թիւը հասնում է մօտ 300-ի:

Եկեղեցիների հետ միասին խօսենք նաև վանքերի մասին խիստ կարճ կերպով, քանի որ առիթն այստեղ ներկայացաւ ինչպէս յայտնի է հայոց հին աշխարհը քրիստոնէական նախնական դարերից սկսած սկսել է զարգարուել մենաստաններով, վանքերով և մատուռներով: Մեր երկրի որ անկիւնում էլ ճանապարհորդելու լինենք, ամեն մի քայլափոխին կը հանդիպենք վանքերի, աւերակ, կիսակործան, կանգուն կամ վերանորոգուած վիճակում: Վասպուրականը իր քոյր նահանգներից պակաս չէ մնացել իր վանական հաստատութիւններով. Արծրունիներն ետ չեն մնացել Բագրատունիներից և Ռուբինեաններից: Արդարև Վասպուրական կամ ուրիշ խօսքով ներկայ Վանի նահանգը ծածկուած է մեր նախնիների մեծագործութիւնների միակ զօրաւոր ապացոյց ծառայող վանական հաստատութիւններով: Սակայն մեր նպատակից դուրս է այստեղ թուել միառմի այդ վանքերը կամ նոյնիսկ ամենահամառօտ տեսութիւնն անել այդ դարևոր հոյակապ սրբավայրերի անցեալի մասին— դա առանձին ճիւղ է— թող մասնագէտների կամ հոգևորականների վրայ մնայ այդ պարտքը, սակայն ինչ որ իմ ուշադրութիւնս գրաւել է— դա Վանի մի քանի վանքերի ներկայ տնտեսական ու բարոյական վիճակն է, որոնց մասին երկու խօսք պիտի ասեմ:

Նախ չմոռանանք յիշել որ ամբողջ վանքերի թիւը Վանում հասնում է 70-ի, միասին հաշուելով ամայացած, կիսակործան, կանգուն և վերջերումս վերանորոգուած վանքերը: Կէսից աւելի բոլորովին աւերակ են և մասամբ կանգուն են, իսկ մնացածները կանգուն են և բաւական շէն: Կան սակայն 30-ի չափ վանքեր, որոնք աչքի են ընկնում իրանց տնտեսական հարստութեամբ— կալուածներով: Այդ վանքերն ունին անբաւ հողային հարստութիւն, արտեր, անտառներ, վարելահողեր, ծառաստաններ, մարգագետիններ, արօտավայրեր և հասոյթաբեր շէնքեր: Այդ վանքերից ամենանշանաւորն են Վանի լճակի վրայ գտնուած կղզիներում Աղթամարի ս. Խաչը, Կտուցի ս. Կարապետ, Լիմի ս. Գէորգ վանքերը, Վան քաղաքին

պատկանող վանքերից Վարագի ս. Նշան, Կարմրուրի ս. Աստուածածին, Սալնապատի ս. Գրիգոր վանքերը, Գաւաշում Նարեկի ս. Գրիգոր, Ոստանի մօտ Ձաղար ս. Նշան, Հայոց Ձորում Խեքայ վանք, Սրբու Մարիանոսի վանքը, ս. Բարդուղիմէոսի վանքը Բաշկալէի մէջ, Տ. Յուսկան որդու վանքը Բերկրիում, Էրերնայ էջմիածին և Տիրամայր ս. Աստուածածնի վանքը Թիմարի մէջ (այս հռչակաւոր վանքը այժմ համանուն գիւղի եկեղեցին է դառել, գիւղացիները չափազանց փրչացել են և վանքի անունով մուրացկանութիւն անելով են ապրում), Մեծփայ վանքը Արճէշում, Սքանչեւագործը Ալջաւագում, Հոգոց վանքը Շատախում (Նորդուղ), ս. Սահակ և ս. Թովմաս Կարճկանի մէջ և դեռ ուրիշ շատ վանքեր։ Այս վանքերից ոմանք ունին միաբանութիւն, հոգաբարձութիւն և բաւական կանոնաւոր կերպով կառավարւում են, ոմանք թէև ունին վանահայրեր և միաբանական փոքր ուխտ, սակայն սրբանց կառավարութիւն խիստ լքուած վիճակի մէջ է, իսկ վանքերից շատերի հողային կալուածները մի մասը հետզհետէ անցնում են անհատների ձեռք, արդէն մարգագետիններից վանքերն այնքան չեն կարող օգտուել, որքան վանքերի հարեւան գիւղացիներն (հայ թէ քուրդ)։

Այս վանքերը մօտիկ անցեալում իսկ (XIX դարու կէսերին) ունեցել են աւելի ընդարձակ տարածութեամբ կալուածներ, սակայն այս ու այն աղբեցիկ հայ կամ օտարագգի անհատները տեանելով վանքերի անտէր վիճակը, վանահայրերի անճարութիւնը, իւրացրել են առանց աղմուկի։ Մի քանի վանքերի հարստութիւն բոլորովին ոչնչանալու վրայ է։

Վանի բոլոր վանքերն էլ օգասուն են, ունին առատ անուշահամ ջուր, լաւ և բարեբեր հողեր, որոնք եթէ մշակուին, գիւղատնտեսական և երկրագործական ամեն տեսակ բերքեր կարող են արտադրել։ Ոչխար ու կով կարելի է պահել և սրբանցից ստանալ ընտիր իւղ, պանիր, կաթ, սեր, մածուն։ մեծ քանակութեամբ մեղուի փեթակ պահելու նոյնպէս յարմարութիւն ունին. եթէ ոչ բոլորը, գոնէ մի քանի վանքեր կարող են նաև թթենիներ մշակել և շերամապահութեամբ զբաղուել. հացահատիկների և խոտերի մշակութեան մասին խօսելն արդէն աւելորդ է։ Այգիներ, անտառներ տնկել նոյնպէս կարելի է։

Վանի բոլոր վանքերն էլ ծառայում են իբրև ուխտատեղի Վանի դաւառների համար։ Ամեն վանք կամ սուրբ տաճարայ մէջ ունի իր որոշ տօնական օրերն, այդ օրերում նահանգի մէկ անկիւնից մինչև միւս անկիւն ժողովուրդը խումբ-խումբ դիմում է ուխտի, իր խոստացած նուէրը տալու, ուխ-

առ կատարելու, մի քիչ էլ ուրախանալու և զուարճանալու համար: Թէ ինչ է վանքը, ո՞վ է իր պաշտպան սուրբը, նա գաղափար չունի այդ մասին, ինչպէս յիշել ենք արդէն, նա քերականագրութեամբ ծեծում է իր կուրծքը, օգնութիւն է խնդրում, իր ցաւին դարման է խնդրում:

Վանքերի կառավարութեան գործը Վանի նահանգում երկու մասի է բաժանուած. Վանի առաջնորդական թեմին պատկանող վանքերը ենթարկւում են Վանի առաջնորդարանի անմիջական իրաւասութեան, իսկ Աղթամարի կաթողիկոսական թեմին պատկանող վանքերը կառավարւում են Աղթամարի կաթողիկոսարանի վարչութեամբ: Սակայն թէ առաջնորդարանն և թէ կաթողիկոսարանն չունին իրանց իշխանութեան տակ բաւականաչափ ոյժեր՝ վանքերը իրանց ներկայ ընկած դրութիւնից բարձրացնելու և իրանց արժանաւոր դիրքին հասցնելու համար. հոգևորականների պէտքի պահանջը լրացնելու նպատակով շատ վանքերի ընդհանուր վարչութիւնն աշխարհական հոգաբարձուների է յանձնուած:

VI

Ասորիները.—Թիւր. բնակավայրը. ազգային-մտաւոր վիճակը. բողոքական և կաթողիկ միութնարութիւնները. ներկայ Մարշիմոնը. ասորիների անտեսական վիճակը:

Այս ցեղն, որ իր բազմամարդութեամբ Վանի նահանգի ազգաբնակչութեան մէջ երկրորդ տեղն է բռնում, բնակւում է գլխաւորաբար Հէքեարի միութասէրիֆութեան—գաւառի մէջ: Վանի շրջանակում ապրող ասորիները շատ չնչին թիւ են կադմում. մեր անձնական տեղեկութիւնները այս տարրի մասին շատ քիչ են, բայց և այնպէս մի քանի խօսքով ընթերցողին աղօտ գաղափար տանք այս հնագոյն ժողովրդի մնացորդների—փշրանքների ներկայի մասին:

Ասորիների թուի անստուգութեան խնդիրն աւելի բարձր աստիճանի է հասնում, բայց ընդունուած թիւն է 90,000: Այս ժողովուրդն ապրում է Հէքեարի գաւառի Զուլամերկ, Տիար, Տըլուււ, Բէյթ-իւլ-Շիւբաբ, Բաշկալէ գաւառակների և գիւղախումբերի գիւղերում: Իրանց բնակավայրերն ընդհանրապէս վերին աստիճանի լեռնոտ են, կտրտուած անդնդախոր ձորերով և կիրճերով, բնական ամրութիւններով: Կրօնով քրիստոնեայ են, դաւանութեամբ նեստորական, հոգևոր գլուխն է Մարշիմոն, որի աթոռը գտնւում է Զուլամերկի Կոճանիս

գիւղում. ունեն թէև ազգային սեփական լեզու, գիր և գրականութիւն, բայց մտաւոր զարգացումով բոլորովին ետ են մնացն իրանց հարեան զաւառում—Ուրմիրում բնակւող ազգականներից և նոյնիսկ հարաւի սահմանակից ազգակիցներից—Մուսուլի ասորիներէից, Այս ու այն անկիւնում ունին մի քանի գիւղական տարրական վարժարաններ որոնք բառիս բուն նըշանակութեամբ անուանական են և խալիֆայական ասելու փոխարէն աւելի կը յամարի ասել թէ կաշայական կամ շամաշայական են, որովհետև այդ դպրոցները բացուած են կաշաների և շամաշաների ձեռքով, որոնք անհամեմատ աւելի տգէտ, կոյր են, քան մեր գիւղական քահանաները (շամաշա—սարկաւազ, կաշա—քահանայ)։

Աւելի քան 30 տարի է որ Վանի ասորիների մէջ մուտ են գործել անգլիական բողոքական միսիոնարութիւններ, ինչպէս նաև կաթոլիկ քարոզիչներ այս ազգը լուսաւորելու, նորոգելու և անշուշտ հոգեպէս փրկելու համար, սակայն մինչև այժմ թափուած ջանքերի և հրապարակի վրայ երեցած արդիւնքի վրայ. նայելով պէտք է ասել զուր ջանք և անօգուտ վաստակ. բայց մեր խօսքը ներկայի մասին է, ի՞նչ գիտէ թէ մօտիկ կամ հեռու ապագայի մէջ տարբեր-տարբեր դաւանութիւնների և և ազգութիւնների պատկանող այդ առաքեալներէ քարոզութիւններն ի՞նչ արդիւնք կարող են ցոյց տալ։ Այդ միսիոնարութիւնները չեն բաւականանում միայն հասարակ գիւղացիներին քարոզելով, այլ իրանց ոտքը ձգել են հոգևոր պետի—Մարշիմոնի գահարանի դռնից էլ ներս և ժողովրդի ազգեցիկ թէ հոգեւորական և աշխարհական անձնաւորութիւնների մէջ դաւանական պառակտումներ և կուսակցութիւններ են առաջ բերել։ Այդ կուսակցութիւններն իրանց ազգեցութիւնները գործ են դնում մարշիմոնիների զերդաստանի այս ու այն անդամների վրայ։ Անցածները վախճանեցաւ Մարշիմոնը. սա իբրև իրան յաջորդ ունէր երկու թեկնածուներ, մէկը անգլիասէր, իսկ միւսը ֆրանսասէր։ Անգլիասէր կուսակցութիւն յաղթող հանդիսացաւ, և հանգուցեալ Մարշիմոնին յաջորդեց իր եղբորորդի 180 ամեայ Բենեամինը. սա աւելի բողոքական միսիոնարութեան յարուած լինելով՝ կաթոլիկների ազգեցութիւնն չէզոքացնելու ջանքեր է ցոյց տալիս. վաղուց իրանց մօտ ապրող անգլիացի մասըը Բրաունի եպիսկոպոս մեծ հակակրօնութիւն է վայելում ասորիների մէջ։

1880 թուին գերման քարոզիչ Վալ ասորիների մտաւոր զարգացման մղում տալու նպատակով Եւրոպայից բերաւ ասորիներէն զրքեր և մամուլ, սակայն որեւէ կերպով չկարողա-

նալով արդենք ցոյց տալ՝ երկու տարուց յետոյ թողեց հեռացաւ: Այժմ էլ անգլիացի բողոքական միսիոնարութիւնը տեսնելով թէ իրանց դպրոցը չի կարող նպատակին ծառայել, որոշել է Վան քաղաքը փոխադրել այդ դպրոցը. անցած օրերը այդ նպատակով 1—2 հոգի Վան եկան:

Ասորիներ իբրև լեռնական ժողովուրդ աչքի են ընկնում իրանց առողջ կազմուածքով, քաջութեամբ և անվերելութեամբ. դեռևս ընդհատվել են ընտելացած չեն Օսմանեան կառավարութեան վարչական կարգ ու կանոններին. ինչպէս հոգևոր, նոյնպէս և ազգային գործերի գլուխ գտնուող Մարշիմոնի միջոցով են կատարում պետական հրահանգները: Մարշիմոնը իր ժողովուրդի ներքին գործերը կառավարում է մելիքների խորհուրդով, որոշուած քանակութեամբ հարկ է հաւաքում ժողովրդից և ինքն է յանձնում կառավարութեան: Ասորիների բնակավայրերում կան այնպիսի տեղեր, ուր պետական պաշտօնեաներ մուտք չեն գործել: Տնտեսապէս աղքատ են, երկիրը հագիւ է իրանց հացը տալիս. զբաղւում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ. պանդխտութեան դիմողներ էլ շատ կան, որոնք գնում են դէպի Ռուսաստան և ուրիշ հեռաւոր երկրներ:

VII

Քրդերը—Թիւր և ընդամասը. ընդարձակ և կենցաղը. քնդական նկարագիրն և կազմուածքը. զբաղումը. առգականութիւնը. համիդէ հեծելազունը. քրդական բարքերի մեղմացումը. անտեսական վիճակը. քուրդ կրօնականներ. հարստանալու նոր տենչ և ձգտումը. կրօնական նոր վիճակը. նշանաւոր ցեղեր և ցեղային ստորաբաժանումները և նրանց ընդամասը:

Այժմ անցնենք քրդերի մասին, որոնք իրանց թուով եթէ ասորիների չափ չկան, բայց շատ էլ պակաս չեն այժմ: Թէև կար ժամանակ որ Վանի նահանգում քրդերն աւելի մեծ թիւ ունէին, բայց այժմ դրանց կարելի է հաշուել ոչ աւելի 60,000:

Մինչև անցած XIX դարու կէսերը Վանի նահանգը իր շրջակայ նահանգների պէս գրեթէ Գիւրդիստան էր և ինթարկւում էր քրդական տիրապետութեան վարչութեան: Մակայն անցաւ Նան Աւդալի, Նան Մահմուդի, Բէդիրիսան բէգի ժամանակները, Օսմանեան կառավարութիւնն իր համեմատաբար խելացի և սխտեմատիկ վարչականութեամբ կամաց-կամաց և աստիճանաբար այդ վայրերի ոյժերը ջախջախեց և ենթարկեց պետական կարգ ու կանոններին. թէև այժմ էլ քրդերը պահում են իրանց մէջ նախնի կիսավայրերի հակումներ, բարքեր, բայց տարէց տարի փոփոխութիւններ նկատւում են: Այժմ եթէ կառավա-

բուժիչնը ցանկանայ, կարող է քրդերին բոլորովին ճնշել և օրէնքները տառացի գործադրել նրանց նկատմամբ, սակայն ցատկուով աննպատակալարմար է համարուել թիւրքական բաղաճականութեան մէջ, ներկայումս մանաւանդ անյարմար է այդպիսի բեժիմ...

Վանի նահանգին պատկանող քրդերն ընակուել են կուսակալութեան սահմանագծերի վրայ, սահմաններից քանի մօտեանանք նահանգի կենտրոնին, այնքան ցանցառանուել է քրդերի թիւը: Քրդերը բաժանուել են էլիաթների — ցեղերի, իսկ էլիաթներն էլ ունին իրանց ստորաբաժանումներ, որոնք կրում են իրանց յատուկ անուններ: Էլիաթները երկու խմբի են բաժանուել — աշիրաթների և ռայաների: Աշիրաթները կառավարուել են իրանց ցեղապետներով — էլաղասիներով, իսկ ռայաթներն ուղղակի կառավարութեան են ենթարկուել: Քրդերն իրանց ընակութեան տեղերն ընտրած են ամենագեղեցիկ դիրքերի վրայ, եթէ էլ իշխանք նրանց ձմեռնային կեանքն որ տուտւի է 4—5 ամիս, և անց են կացնում հողաշէն, պարզ, նոյնիսկ անօդ ընակարանում, նրանք իրանց կեանքի մեծագոյն մասն անց են կացնում լեռների լանջերի վրայ, ձորերի գրկերում, կաթնահամ և սառնորակ ջրերի ափին, ծաղկազարդ լմարգաղետիների շուրջը: Չեմ տեսել և չեմ ճանաչուել մեր աշխարհում մի ազգ կամ ցեղ, որ առանց որեւէ ջանքի այնքան առատաբար վայելել կարողանայ ընութեան ամենաթանկագին պարգևներն ինչպէս քուրդ տարրը: Ամառուայ տապ ու տօթին ծծում է լեռնային ամենամաքուր, կենարար օդը, խմում է լեռների կուսական կրճքերից բղխող, ինչպէս ասում են, անմահական ջրերը, ուտում է դրախտային ծաղիկներից և խոտերից պատրաստուած կաթ, մածուն, սեր ու կարագ, իւղ ու պանիր, քնում է անուշ գեփիւններով օրօրուող և մարգածաղիկներով ու արօտախոտերով շրջապատուած վրանի տակ, հեծնում է ջէյրանի պէս գեղեցիկ, սրընթաց նոյզ, ընութիւնից սովորելով հագնում է լայն հագուստներ, որոնք նրա կուրծք, թիկունք, ոտներ ու բազուկներ ճնշում կրելուց բոլորովին ազատ են պահում: Իր ֆիզիկական միակ աշխատութիւնն է հեծնել նոյզ, ձիավարութեամբ, զինավարժութեամբ և աւաղակութեամբ զբաղուել: Նրա իդէալն է փայլել հասարակութեան մէջ իբրեւ կրմանը — այսինքն իբրեւ քաջ, աներկիւղ, ռևակալ, վրէժխնդիր, վեհանձն քուրդ: Ահա այս պայմաններում ապրող քուրդը ոչ թէ միայն նահանգի միւս մասերում օտար ցեղերից, այլ նոյնիսկ քաղաքակիրթ կոչուած երկրներում ապրելու բախտ ունեցող ամենաբարեկեցիկ կեանք

վարող ազգերից իր կազմուածքով և առողջական վիճակով շատ բարձր է կանգնած. բարձրահասակ, կուրծքը չափազանց լայն և աղեղնաձև դուրս ընկած, ուսերը բարձր, թիկունքը լայն, մէջքը հաստ, բազումները հաստ և ուժեղ, մատները մեծ-մեծ և երկաթի պէս ուժեղ, վիզը հաստ և մի քանի ծալքեր փռած միմիանց վրայ, դէմքը խոշոր, կլոր և թխամորթ, յօնքե-րը թաւ, բերանը սև և դէպ ականջները ոլորած, աչքերը խո-ժոռ և կրակոտ, որոնք արտայայտում են դայրոյթ և վայրե-նութիւն:

Գրգերի ամենասիրելի և միակ զբաղումն է խաշնարա-ծութիւն: Անհաստատաբնակ քուրդը չի կարող կապուել այն-պիսի մի զբաղումի հետ որ պահանջում է ուրիշ բազմաթիւ դը-ժուար և ծանր պայմանների հետ նաև հաստատուն և մշտական բնակութիւն: Գարնան սկզբից սկսած մինչև ցրտերի սկսելը—աշնան վերջերը նա իր ոչխարների հօտի հետ թափառում է սարից-սար, հովտից-հովիտ: Երկրագործութիւնը նա թողել է հային, իսկ Վանի անսպառելի արօտավայրերն առել է իր տրամադրութեան և իրաւասութեան տակ. պահում է մեծ քա-նակութեամբ ոչխար և առանց քրտնքի օգտւում է բնութեան բարիքից: Որ Վանի քրդերը երկրագործութեամբ չեն պարա-պում, ոչ թէ պատճառն այն է թէ իրանց բնակավայրերն այդ զբաղման յարմարութիւններ չեն տալիս, ո՛չ, այլ նրա համար որ երկրագործութիւնը այնպիսի մի զբաղմունք է, որ պահան-ջում է մշտապէս կապուել միևնոյն հողի հետ, քրտնք թափել, համբերութիւն ունենալ ամառուայ միջօրէի շոգերից չփախչել, պաղ աղբիւրների ջրերի հետ միասին խմել տաք և պղտոր ջը-րեր, վարել, ցանել և ապա հնձել և բաւականանալ չոր հացով ու թանով կամ թանապուրով, մէկ խօսքով ամբողջ տարին չարաչար և տաժանելի աշխատութիւններով ծանրաբեռնուել, յոգնել և մաշել: Ի՞նչ հարկ կայ այդ յաւիտենական տանջանք-ների հետ կապուել, թող երկրագործները կրեն այդ դժոխային նեղութիւնները, իսկ ինքը որևէ կերպով ձեռք է բերում 50—60 հատ ոչխար, վարձում է հովիւ, նրա անմիջական հոգա-ծութեան, տան մշակների և իգական սեռին պատկանող ան-դամների խնամքին է յանձնում իր հօտը, որոշուած արծուա-վայրեր նախապէս ցոյց է տալիս հովւին և յանկարծ օրերով, շաբաթներով և ամիսներով հեռանում իր վրանից, տնից-տե-ղից: Ո՞ւր է գնում, ոչոքի յայտնի չէ բացի իր ընկերներից, ջէյրան նժոյգը թռչում է սարից-սար, ձորից-ձոր և տանում է նրան օրերով հեռու ուրիշ հողեր. նա գնում է թալանի —կողոպուտի, կռուի, վրժինդրութեան. վերադարձած ժա-

մանակ, եթէ անյաշող չի անցել իր արշաւանքը, բերում է իր հետ ոչխարի հօտ, եզներ, կովեր, ձիեր, իր ճանապարհորդական յոգնածութիւնը անցկացնելու համար մի քանի օր հանգատանում է վրանի տակ, տեղեկութիւններ հաւաքում իր բացակայութեան օրայի (ամարանոցի) մէջ պատահած դէպքերի մասին, այցելում է իր ոչխարներին, նոր-նոր հրաշանգ տալիս տան անդամներին ու ծառաներին և նորից պատրաստում պտոյտի:

Խաշնարածութեան չափ սիրելի է քուրդին աւազակութիւն. կամենում էք զբաղում համարեցէք, իսկ եթէ ոչ յատկութիւն: Իւրաքանչիւր քուրդը իր զաւակին մանկութեան հասակից վարժեցնում է անվեհերութեան, ձիավարժութեան, զինավարժութեան, ինքնավստահութեան և աւազակութեան, ծանօթացնում է նրան իր ցեղագրութեան և ցեղի այս ու այն նախահայրերի հետ, որոնք հերոսական դիւցազնական անուն են ժառանգել այս ինչ դէպքի, կռուի, պատուախնդրութեան մէջ: Պատմում է նրան դիւցազնական հէքիաթներ, առասպելներ և իրողութիւններ: Տղան իր դաստիարակ հօր ազդեցութեան տակ կրթւում, մեծանում, կրակ է դառնում, օրէցօր հետամուտ է լինում, առիթներ է փնտրում ընտանեկան, դրացիական, ընկերական շրջաններում ունէ քաջութիւն, հերոսութիւն ցոյց տալու և իր հօր ու բարեկամների կողմից գովասանքների արժանանալու և ահա պատանեկութեան հասակում մի գեղեցիկ օր նոյն ոգով և ուղղութեամբ դաստիարակուած ընկերների հետ հրոսակային խումբ կազմելով սկսում է արշաւանքի փորձեր անել: Կամաց-կամաց նա առաջդիմում է այդ ասպարիզում և հետզհետէ փորձեր է անում գերազանցելու իր հայրերին և նախահայրերին:

Քուրդն ռանի բանաւոր գրականութեան մի ճոխ գանձարան, որի նիւթերն են դիւցազներգութիւն, եղերերգութիւն, հովուերգութիւն: Պոէմաների ձևով շարադրուած այս երկար-երկար բանաստեղծութիւնների մէջ դուք հանդիպում էք մի-միանց շատ նման, նոյնօրինակ դէպքերի, վրէժխնդրական, պատերազմական պատմութիւնների և արիւնահեղ տեսարանների: Որքան տխուր, սրտաճմլիկ են այդ նկարագրութիւնները, բայց յուսահատեցնող, վհատեցնող չեն, այլ դրա փոխարէն բովանդակում են իրանց մէջ ոգևորիչ, գրգռիչ և վրէժխնդրի շեշտեր: Ահա այդ շեշտերն են որ քրդին դարձնում են վայրենի, կատաղի, արիւնարբու և աներկիւղ: Քուրդ պատանին իր օրօրոցի միջից լսել է տասնեակներով, հարիւրներով և բերան սովորել է այդ պոէմաները: Այդ օրից արդէն նա կազմել է իր փիլիսոփայութիւնը կեանքի մասին, այդ օրից

նրա աչքում կեանքը կորցրել է իր արժէքը, այդ օրից նա սէր է ցոյց տալիս դէպի արկածալից կեանքը, այդ օրից նրան ատելի և անտանելի է դառնում խաղաղ և միօրինակ կեանքը. դաստիարակ հօր կրթութեան հետ միանալով այս ազդեցութիւնը արդարեւ հրաշք է գործում: Այս ազդեցութեան առաջ ոչնչանում են քաղաքակիրթ համարուած երկրներում մանուկը դաստիարակելու համար ձեռք առնուած ամենաազդու միջոցներն անգամ:

Քուրդը սիրում է կռիւ և կողոպուտ երկու գլխաւոր նշապատակների իրագործման համար. նա կողոպտում է իր ապրուստ հայթայթելու, նիւթապէս հարստանալու համար, կողոպուտի մէջ նա կուռւմ է, արիւն է թափում իր վայրենի հակումներին յագուրդ տալու, իր վրէժը լուծելու համար: Իր նշապատակի իրագործման համար նա թալանելու փորձեր է անում բոլոր նրանց վրայ, որոնց վրայ իր ոյժը յաղթող է հանդիսանում. նա խտրութիւն չի դնում ոչ ազգութեան և ոչ կրօնի մէջ. բոլորովին սխալ է ոմանց կարծիքը թէ քուրդը յատուկ թշնամութիւն և ատելութիւն ունի դէպի հայ տարրը, քուրդի կողոպուտին ամեն միւս ցեղերից աւելի ենթակայ է նրա արիւնակից քուրդը, այո՛, կայ քրդի մէջ ցեղական ատելութիւն, յաւիտենականի չափ երկարատեւ թշնամութիւն. բայց քրդական է դա, քրդական այսինչ ցեղը թշնամի է այնինչ քրդական ցեղի հետ: Այդ թշնամութիւնը հեշտութեամբ չի վերջանայ, դարեր է տևում: Ցեղական այդ ատելութեան պատճառով շարունակ առիթներ կան երկու հակառակորդ ցեղերի արիւնահեղ ընդհարման համար:

Քուրդը կողոպտում է և՛ քրդին, և՛ թիւրքին, և՛ հային, և՛ գերմանացուն, և ամերիկացուն, իսկ հայերը, որ այսքան ենթակայ են քրդական աւարառութեան, պատճառը ոչ թէ այն է որ նրանք ուրիշ ազգի կամ կրօնի զաւակ են, այլ որովհետեւ Մովսէսի «ալն ընդ ական» սկզբունքի փոխարէն կատարում են Յիսուսի պատուէրը. ապտակուելիս, շուտ են տալիս միւս երեսն էլ:

Սրանից տանն-տաններկու տարի առաջ, ամրան ժամանակ է լինում կարծեմ, երբ Վանի ամերիկեան միսիոնարներից մէկը Վանի գիւղերում ճոնապարհորդութիւն էր անում քարոզչի պաշտօնով. յանկարծ լեռան կրճի մէջ հանդիպում է մի քանի քրդերի, որոք առանց բռնի կորցնելու կողոպտում են միսիոնարին և իր ծառային: Մեր պատուելին իր ծառայի թարգմանութեամբ հասկացնում է քրդերին աւետարանի պատուէրների մի քանի կէտեր, քրդերը կուշտ ծիծաղում են ա-

ւետարանական ուղևորի վրայ և իրանց աւարները գրկած առօք-փառօք շարունակում են իրանց ճանապարհը: Այդպէս չի վարում սակայն քուրդը. եթէ մէկը իրան մօտենայ կողոպտելու նպատակով, նա անմիջապէս, առանց բռնի կողքնելու կը դիմէ իր մշտական և անդաւաճան ընկերի—զէնքի օգնութեան. մինչև վերջին շունչը պատրաստ է կռուելու, արիւն թափելու իր պատիւը պաշտպանելու, իր անունը արատից ազատ պահելու—չկողոպտուելու համար: Քրդի համար իր պատիւը անհամեմատ աւելի թանկ է, քան իր կեանքը, վտանգի բռնիքին նա մահուանից չի վախենում, իսկ եթէ իր պատիւն մէկ անգամ ոտնակոխ եղաւ, նա տարիներով գիշեր-ցերեկ պէտք է աշխատի, մինչև որ առիթ և յարմարութիւն գտնի իր արատաւորուած պատիւը վերականգնելու համար:

Քրդի համար բնական մահից շատ աւելի հաճելի է կռուի դաշտում ընկնել: Այդ պատճառով կարելի է ասել թէ արական սեռին պատկանող քուրդ երիտասարդների և չափահասների 70% կռուի մէջն է ընկնում:

Քուրդը, որքան որ լեռների գրկում, իր փորձ նժոյգի վրայ, իր զէնքերով շրջապատուած դէպքերում կատաղի առիւծ է դառնում, սակայն նոյնքան և աւելի խեղճ, երկչոտ է դառնում քաղաքում, հինգ տարեկան մանուկն էլ կարող է քաղաքում քրդի վրայ բղաւել. քուրդը այդպէս էր մանաւանդ դեռ սրանից 15 տարի առաջ, երբ դեռ կազմակերպուած չէր Վանի քրդերի մէջ համիդիէ հեծելադուները: Իսկ այն օրից ըսկսած երբ յիշեալ գունդը կազմուեցաւ և քուրդ պաշտօնեաները իրաւունք ունեցան սուրերի շառաչիւնով պոռոյտներ անել քաղաքի շուկաներում և պաշտօնատեղերի առաջ, կամաց-կամաց քրդերն սկսեցին հանգիստ շունչ առնել քաղաք եղած ժամանակ. վանեցի քրդերը այժմ ոչ թէ միայն Վան քաղաքում, այլ նոյնիսկ մայրաքաղաքում—Կ. Պոլսում—ամեն մի դասակարգի մէջ և պետական-պաշտօնական շրջանակներում կարող են ազատ ելնուտ գործել: Անշուշտ մայրաքաղաքը իր բարքերով ազդեցութիւն պիտի ունենայ քրդական կոպիտ, վայրենի բռնազգներին և հակուճիների վրայ, բայց նահանգներում—լեռների գրկում ապրողները դեռ ո՛վ գիտէ մինչև երբ պիտի շարունակեն այսօրինակ կենցաղավարութիւնը: Ներկայ հանգամանքների և երևոյթների վրայ նայելով այսքան կարելի է ասել, որ վանեցի քուրդը քաղաքակրթութեան ճանապարհից շատ հեռու է, կողոպտելու հակումը նրա մէջ միս ու արիւն է դառել, նրան այդ մոլութիւնից ազատելու համար քարոզներ, յորդորներ ապարդիւն են անցնում, թերևս նա համոզուի էլ իր ա-

բարձրի ստորութեանն, խօսք էլ տայ ձեռնթափ լինելու այդ մտ-
լութիւնից, սակայն վաղը նա կը մոռանայ այդ բոլորը և ա-
ւելի ազահութեամբ իր որսի ետեւը պիտի ընկնի:

Տնտեսապէս քրդերը աւելի լաւ վիճակ ունին, քան գա-
ւառներում ապրող միւս բոլոր ազգութիւնները: Իսկ տնտեսա-
պէս առաջդիմելու ձգտում ոչ մի ուրիշ ժողովուրդի մէջ այնքան
չի զարգանում որքան քրդերի մէջ այս վերջին 10—15 տարի-
ներում: Մինչև անցեալ դարու վերջերը քուրդը բաւականա-
նում էր պարզ ապրուստով—գիւղական հասարակ կենցաղով.
կողովուտը ծառայում էր նրան իբրեւ ապրուստի անհրաժեշտ
միջոց, դրա հետ միանում էր նաև քաջութիւն և համբաւ վա-
յելելու փափագը, սակայն այժմ քուրդը բուն կերպով ձգտում
է հարստանալու փող դիզելով. հետզհետէ հասկանում է նա, որ
զէնքով և քաջութեամբ չպիտի կարողանայ իր դիրքը պահել,
դեղին ոսկիները անհրաժեշտ են այդ նպատակի համար: Արդէն
Վանի ամենաարդիւնաւոր զբաղումը—խաշնարածութիւնը գտնը-
ւում է գրեթէ միայն քրդերի ձեռքում. 60,000 թիւ կազմող
այս ժողովուրդը պահում է 300,000 ոչխար և ամեն տարի
50—60,000 լիւրա (կամ մօտ կէս միլիոն բուբլի) շահ է ստանում
ոչխարից: Արդէն Վանի նահանգում չկայ ուրիշ որևէ զբաղում
կամ արհեստ, որ կարողանայ այսքան շահ մտցնել Վանի նա-
հանգը: Այո, Վանի համար ամենակարևոր գումարն անցնում
է քրդի ձեռքը: Ճշմարիտ է որ քուրդ հասարակութեան բոլոր
ընտանիքները նիւթապէս միևնոյն աստիճանի վրայ չեն գտնը-
ւում, այլ կան բազմաթիւ ընտանիքներ, որոնց գլուխ գտն-
նուող տղամարդերը լոկ ստրուկի կեանք են վարում, իրանց ամ-
բողջ կեանքում աղայի (ցեղապետի) հաճոյակատարն են հան-
դիսանում, բայց և այնպէս նրանց նիւթական վիճակը շատ ա-
ւելի լաւ է, քան հայ կամ ասորի գիւղացիներինը: Իսկ մեծա-
մասնութիւնն արդէն անհամեմատ լաւ վիճակ ունի: Առասպե-
լական հարստութիւն ունին ցեղապետները (էլադասիներ) և
կրօնապետները (շէյխեր) և մանաւանդ սրանցից մի քանիսը:
Յիշենք այստեղ օրինակ Հիւսէյն փաշան—Ալշաւազի Հայդա-
բանլի քրդերի հռչակաւոր ցեղապետը և շէյխերից Նեհրիի կամ
Շամդինանի շէյխ Մահմադ Սըդըք, հռչակաւոր շէյխ Ուբադուլ-
լահի համբաւաւոր որդին: Այս երկու պետերի հարստութիւնն
բառի բուն նշանակութեամբ անհաշուելի է: Չիշենք իրանց
ունեցած առևտրական ընդարձակ գործառնութիւնները, որոնք
տարէցտարի աւելի և աւելի են ընդարձակւում և ամենահմուտ
օտարազգի վաճառականների զարմանքն ու նախանձը շարժում,
միայն ընթերցողին մի ազատ գաղափար տալու համար

սրանց հարստութեան մասին այս ասեմք որ ոսկիները գետե-
ղուած են ոչ թէ երկաթէ արկղներէ մէջ, այլ մեշոկներում, և ե-
թէ պէտք լինի ընդհանուր հաշիւ անելու, ոչ թէ համրում են
այլ չափաններով չափում են: Վանի այս երկու քուրդ կրեստմե-
րը իրանց այդ հսկայ հարստութեամբ աստուածային ազդեցու-
թիւն ունին ոչ թէ միայն Վանի նահանգում այլ նոյնիսկ շըր-
ջակայ և հեռաւոր տեղերն էլ: Բնական է որ քրդերի մէջ շա-
տերը պիտի գտնուեն որ նախանձեղով սրանց վիճակին պիտի
ձգտեն իրանց համար էլ այդօրինակ դիրք ստեղծել, և իրաւ որ
այսօր կան բազմաթիւ ուրիշ քրդեր, որոնք գիշեր-ցերեկ տո-
գորւում են այդ տենչերով և եթէ այսօր նրանց աստիճանին
չեն հասել, սակայն շատ էլ հեռու չեն և անշուշտ վաղը պիտի
հասնեն իրանց նպատակին: Ահա այս նոր հոսանքը կամ ձըգ-
տումը հետզհետէ ընդհանրանալով և սուր կերպարանք ստա-
նալով՝ քրդի նկարագիրը փոխում է, տանում է դէպի վատն
և դարձնում է նրան աւելի և աւելի ագահ, ընչաքաղց, շահա-
մոլ և անխիղճ:

Վանի քրդերը իրանք իրանց իբրև ազգ անուանում են
կրմանջ. դաւանում են իսլամական կրօն, ունին առանձին լե-
զու, որ կոչւում է կրմանջի, գիր և գրականութիւն չունին,
իրանց կրօնաւոր գրագէտները սովորում են արաբերէն: Պօ-
սած լեզուն բաժանուած է մի քանի գաւառաբարբառների
կամ աւելի ճիշտ ցեղաբարբառների: Մէկի խօսած լեզուն միւ-
սի համար անհասկանալի դառնալու չափ դժուարահասկա-
նալի է:

Կրօնական պարտականութիւնների մէջ ծուլանում են երբ
խնդիրը ձևականութիւնների մէջ է: Կրօնական հասկացողու-
թիւններ շատ գոհիկ և աղճատուած են: Կրօնապետները հա-
մարում են շէյխեր, որոնք բարոյական մեծ ազդեցութիւն ու-
նեն ժողովրդի վրայ:

Վանի սահմաններում ապրող քրդերը բաժանւում են
բազմաթիւ ցեղերի և ցեղերն էլ ունին բազմաթիւ ճիւղաւո-
րութիւններ և ստորաբաժանումներ:

Այստեղ դենք մի քանի նշանաւոր մեծ կամ փոքր ցեղեր
և ցեղերի ստորաբաժանումների անունները: Քրդերի համար
նշանաւոր ասելով պէտք է հասկանալ քաջ, կտրիճ և անվեհեր:

Նախ յիշեմք նահանգի հարաւային սահմանի, Մուսուլի,
Տիգրանակերտի գծերի վրայ, ինչպէս նաև Հէքեարու գաւառի
և Շատախի, Նորդուզի, Մոկսի սահմանների շրջաբնակ ցե-
ղերը: Շարափանցիք, մանձատանցիք, արտոյցիք, շիտանցիք,
գրաւցիք, մամխուռանցիք, եղդինանցիք, գաւտանցիք, միրան-

ցիք (քոչար), խաւըշտանցիք, ալանցիք, խալիւանցիք, սիւկանցիք, մամուշանցիք, կըճանցիք, ալկանցիք, մահմատ-փիւրանցիք, հարըքցիք, ոշկանցիք (եզդի) կայլն: Դեռ հարաւային կողմերում ապրող շատ քրդական ցեղերի անուններ կարելի է թուել այստեղ, սակայն այսքան բաւ համարելով դառնանք արեւելեան և հիւսիսային սահմանների վրայ ապրող մի քանի աւելի հռչակաւոր էշիրաթների անուններ թուելու: —Հէյդարանլիք, մուկուլցիք, թակուցիք, շամսկցիք, միւլանցիք, շկակ կայլն կայլն:

Քրդական բոլոր նշանաւոր ցեղերը աշիրէթ են, այս կարգին են պատկանում ընդհանրապէս վերջին խումբին (արեւելեան-հիւսիսային սահմաններում) պատկանող ցեղեր, իսկ այս ու այն ցեղի ստորաբաժանումներէց ոմանք ռայա են, չունենալով ազդեցիկ պետ, կորցրել են իրանց ցեղապետութիւնը: Աշիրէթներն ընդհանրապէս համիդիէ եղած են: Ամառուայ ընթացքում Վանի նահանգի լեռների վրայ կարելի է տեսնել բոլոր քրդական այս ցեղերը, որոնց վրանների թիւը ոմանք հասցնում են մինչև 10,000-ի:

VIII

Միւս փոքր ցեղերը:—Եզդիները. թիւը. ընակավայրը:—Հէճաները, թիւը. ընակավայրը:—Չէրքէզները. թիւը, ընակավայրը և սրանց նկարագրերը:—Գնչուները:

Այժմ մի քանի խօսք էլ ասենք Վանի նահանգի միւս սակաւաթիւ ցեղերի մասին և վերջացնենք մեր այս ընդհանուր տեսութիւնը: Եզդիներ. —Թուով մօտ 3000: Այս ժողովուրդը ապրում է գլխաւորաբար խոշարի մէջ և մասամբ էլ ցիրուցան նահանգի զանազան գաւառների այս ու այն գիւղերում. ինչպէս ուրիշ շատ տեղերի, նոյնպէս և այստեղի եզդիները հետաքրքրուող օտարակրօններին իրանց կրօնի մասին զգուշանում են տեղեկութիւններ տալ, բայց ըստ երևոյթին սրանք պաշտում են իմիջի այլոց արեւը, սատանային, կրօնական շատ հին և հեթանոսական հասկացողութիւններ ունին. Ֆիզիկապէս առողջակապմ են, քաջ, կտրիճ և սրբատու, ունին ցեղապետներ, քրդերի դէմ ատելութիւն ունին և երբեմն-երբեմն ընդհարումներ ունենում են, իրանց անվեհերութեամբ նոյնիսկ գերազանցում են քրդերին: Ոտում են քրդերէն և հագուստի տարազով, նիստ ու կացով աւելի քրդերին են նման, զբաղւում են երկրագործութեամբ, ինչպէս նաև անասնապահութեամբ:

Հրէաներ.—Թուով մօտ 2000, ապրում են գլխաւորաբար Բաշկալէ քաղաքում և շրջականերում: Այս մովսէսական ժողովուրդը այստեղ էլ հաւատարմութեամբ պահպանում է իր տոհմային առանձնայատկութիւնները, բայցի մայրենի լեզուից գործածում է թիւրքերէն և քրդերէն լեզուները. զբաղւում է իր ցեղի սեփական զբաղմունքով—առւտրով: Թէև Վանի հրէաները իրանց ճարպիկութեամբ գերազանցում են բոլոր միւս դրացի ազգերին, սակայն եթէ համեմատելու լինինք սրանց այս ունակութիւնն ուրիշ միջավայրերում ապրող իւրանց արիւնակիցների հետ, կը տեսնենք որ սրանք աւելի խեղճ են: Սրանց վրայ կայ մշտական մութի հարուած, որ չի թողնում շատ առաջ երթալ իրանց խորամանկութեան մէջ—այդ հարուածը քրդական ազդեցութիւնն է... Բայց և այնպէս հրէաները տնտեսապէս աչքի են ընկնում իրանց հարստութեամբ: Կան շրջիկ առւտրական հրէաներ, որոնք շրջում են նահանգի զանազան մասերում և հասնում են մինչև Վան քաղաքը:

Զէրքէզներ.—Թուով 5—600, տեղացի չեն համարւում, այլ գաղթել են վերջերումս Ռուսաստանից և բնակւում են գլխաւորաբար նահանգի հիւսիսային մասում, Արճէշում, ինչպէս Վան քաղաքի մօտիկ Աղջակալէն կոչուած գիւղում: Թուով աննշան այս փոքրիկ գաղթականութիւնը իր կրօնական հասկացողութիւններով, նիստովակացով և նկարագրով թիւրք տարրին է մօտենում:

Գնչուների մասին մեր խօսքը պահում ենք մեր բուն նիւթի մէջ, որովհետև սրանք, որքան որ թափառիկ ժողովուրդ են համարւում, բայց իրանց գլխաւոր բնակութեան տեղը Վան քաղաքն է:

Ահա սրանով փակում ենք մեր ընդհանուր և հարեանցի տեսութիւնը Վանի նահանգի աշխարհագրականի, ցեղագրականի, վարչագրականի, տնտեսականի և բարոյականի մասին: Անշուշտ շատ յարմար չէր ամբողջ Վան նահանգի այսքան զանազան կողմերի մասին այսչափ արագ կերպով գրիչ շարժել, սակայն պէտք է ի նկատի ունենալ որ մեր նպատակը չէր ամբողջ նահանգը ուսումնասիրութեան նիւթ անել, այլ միայն Վան քաղաքը, և որովհետև առանց այս հարեանցի տեսութեան անկարելի պիտի լինէր ընթերցողին ծանօթացնել Վան քաղաքի և վանեցի հայերի հետ, այդ պատճառով էլ մենք անհրաժեշտ համարեցինք նախքան մեր բուն նիւթին մօտենալը, շօշափել նրա հետ կապ ունեցող կարևոր կէտերից կարևորագոյնները գտնէ հարեանցի և կարճաժամ կերպով:

(Գլ շարունակով)

ԾԵՐՈՒԿ